

3836

Լ. Ս. ՄԱԼՈՏՈՎ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

3(47) «1917»

Մ-86

ՊԵՏՀՐԱՏ


ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1988

30 JUL 2011

Պրովետարներ բոլոր յերկրների, միացե՛ք





91421-1997
 V-86
 Այ

Վ. Մ. Մ Ո Ն Ո Տ Ո Վ 24 JAN 2006

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Զեկուցում մեծ քառանկում կայացած
 հանդիսավոր նիստում 1987 թ. նոյեմբերի 6-ին

282
 894
 442/6

ՊԵՏՀՐԱՏ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ՅԵՐԵՎԱՆ • 1988

I

ՄԵՐ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերներ:

Այսօր Խորհրդային Միության աշխատավորները մեծ հպարտության գիտակցությամբ տոնում են Հոկտեմբերյան հեղափոխության քսանամյակը: (Փոքրիկ ից ծափահարություններ):

Մեզանից նրանք, ովքեր իրենց գիտակից կյանքը սկսել են 1917 թվից առաջ, իրենց սեփական փորձով պատկերացնում են այն արմատական փոփոխությունները, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունն է առաջ բերել մեր կյանքում: Վերջին քսան տարիներում աճած սերունդը մասնակցել է հին, բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանի ուժերի վերջնական ջախջախմանը և նոր, սոցիալիստական կարգերի ստեղծմանը: Այս որերին մեր բոլոր քաղաքներում և գյուղերում, յերկրի յուրաքանչյուր կենդանի անկյունում աշխատավորների մտքերը բևեռված են սոցիալիստական հեղափոխության մեծ քսանամյակի անցքերին, այդ հեղափոխության պանծալի նվաճումներին և մեր առջև բացվող պայծառ ապագային:

Վո՛չ միայն Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները, այլև կապիտալիստական յերկրների ու դաշտների աշխատավորներն այս որերին բերկրալի զգացմունք են ապրում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթության առթիվ: (Փոքրիկ ից ծափահարություններ): Խորհրդային Միության ուժերի անհղ



/6565-50/

4776-9/

В. М. МОЛОТОВ
К ДВАДЦАТИЛЕТИЮ
ОКТАБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ
Госиздат—Издательство полит. литературы
Ереван, 1938

աճման որինակով, այդ ուժերի ծաղկման որինակով, վորը տեղի յե ունենում նրանց աչքի առաջ, նրանք տեսնում են, թե աշխատավորներն ինչի կարող են հասնել՝ պետական իշխանությունը տիրանալով: Ինչ ել վոր անեն մեր թշնամիները, Հոկտեմբերյան հեղափոխության թշնամիները, նրանք ինչ ել վոր հնարեն նրա նշանակությունը փոքրացնելու համար, մեր հեղափոխության վերաբերյալ ճշմարտությունը, խորհրդային Միության վերաբերյալ պարզ, չգունավորված ճշմարտությունը, թափանցում ե ամենուրեք, թափանցում ե ՍՍՀՄ սահմաններից դուրս շատ հեռու վայրեր ե իր կողմն ե նվաճում այն ամենը, ինչ գիտակից ե, այն ամենը, ինչ ընդունակ ե կապիտալիզմի դեմ պայքարելու: (Փոքոքիկալից ծափափառություններ):

Հոկտեմբերյան հեղափոխության մեծ ուժը ե միջադարձային նշանակությունն այն ե, վոր նա իրականացրել ե աշխատավորների նվիրական յերազները շահագործողների ճնշումից ե կապիտալիստների ու կալվածատերերի մոտ կատարած ստրկական աշխատանքից ազատագրվելու մասին: Նա իրականացրել ե այն, ինչի մասին յերազել եյին մարդկության լավագույն ներկայացուցիչները շատ, շատ դարերի ընթացքում:

Մինչև այսպես կոչված «նոր երան» շատ հազարամյակներ անցան: «Նոր երայից» ավելի քան 1900 տարի ել անցավ, յերբ, վերջապես, գտնվեց այն ուժը, գտնվեց այն հեղափոխական կազմակերպությունը, վորը աշխատավորներին մարտի տարալ կապիտալի դեմ, բուրժուազիայի ե կալվածատերերի իշխանության դեմ: 1917 թվին բանվորները՝ գյուղացիների հետ մեկտեղ՝ ջախջախեցին իրենց ճնշողներին, իշխանությունն իրենց ձեռքը գրավելով, մեր յերկրում՝ պրոլետարիատի գիկտատուրա հաստատելով:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմն արագացրեց սոցիալիստական հեղափոխությունը: Այդ պատերազմը կատաղության հասցրեց վո՛չ միայն Ռուսաստանի բանվորներին ե ժողովրդական մասսաներին: Մտ-

կայն, այդ ժամանակ համաշխարհային կապիտալիզմի ամենից ավելի թույլ ողակ դուրս յեկավ հին, ցարական, բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանը: Մյուս կողմից, ամբողջ աշխարհում ամենից ավելի հեղափոխական դասակարգ դուրս յեկավ մեր յերկրի բանվոր դասակարգը, վորը մեծ Լենինի ղեկավարությամբ բոլշևիկյան կուսակցություն ստեղծեց: (Ծափափառություններ):

Ձգձգվող իմպերիալիստական պատերազմը, նախ, հասցրեց ցարիզմի կործանման: Այդ պատերազմն այնքան երսպառել Ռուսաստանի ուժերը, վոր պետությանն սկսեց սպառնալ կատարյալ կրախ, քայքայում: Ամբողջ ժողովուրդը հաշտություն, դադար եր պահանջում: Իսկ իշխանությունը գլուխ անցած կադետները, եսերները ե մենչևիկները, վորոնց աջակցում եյին ռուսաստանյան բուրժուազիան ե անգլո-ֆրանսական իմպերիալիստները, աղաղակում եյին պատերազմը «ինչ գնով ուզում ե լինի» չարունակելու մասին: Այդ իշխանությունը ցանկանում եր պահպանել կապիտալիզմը ե բուրժուական դասակարգերի տիրապետող դրությունը: Նա հաշի չեր նստում՝ այն բանի հետ, վոր գյուղացիության բազմամիլիոն մասսան ցարիզմը տապալեց նրա համար, վորպեսզի ապահովի կալվածատիրական հողի անցումն իր ձեռքը: Հողը գյուղացիներին հանձնելու փոխարեն, կադետ-եսերական-մենչևիկյան իշխանությունը նրանց դատարկ խոստումներով եր կերակրում: Բանվորների ե քաղաքի այլ աշխատավորական խավերի դրությունն որեցոր վատթարանում եր, իսկ Կերենսկու կատալիստությունն ավելի ու ավելի յեր դրսևորում դրությունը փոխելու իր կատարյալ անընդունակությունը: Բուրժուական իշխանության տապալման հարցը դրվեց շեշտակի կերպով: Այն ժամանակ բոլշևիկյան կուսակցությունը դիմեց բանվորներին ե չքավոր գյուղացիությանը՝ կոչ անելով բռնել հեղափոխության ուղին, վորը, Լենինի արտահայտությամբ,

«կտա հաղթութիւնն՝ շահագործողներէ նկատմամբ, գլուղացիներին հող կտա, ժողովուրդներին խաղաղութիւն կտա, բաց կանի համաշխարհային սոցիալիստական պրոլետարիատի հաղթական հեղափոխութեան ճշմարիտ ուղին»:

Հոկտեմբերյան ապստամբութեան նախորեկին Լենինն այսպէս եր բնորոշում հեղափոխութեան նպատակները: Այդ նպատակները մեր հեղափոխութիւնը դարձնում էյին մյուս հեղափոխութիւններին չնմանվող հեղափոխութիւն:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, ամբողջ ներքին և արտաքին իրադրութեան հետեանքով, ձեռք բերեց հատուկ, մյուս հեղափոխութիւններից տարբեր, բնույթ: 1918 թվի հունվարին խորհուրդների Համառուսաստանյան համագումարում հանրադրւմարի բերելով Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին արդյունքները, Լենինն ասում եր.

«Բոլոր մեծ հեղափոխութիւնները ձգտեց են միշտ հիմքից սրբել հին կապիտալիստական կարգերը, ձգտել են վճռաբար քաղաքական իրավունքներ նվաճել, այլև պետութեան բուն իսկ կառավարումը խլել տիրող դասակարգների ձեռքից, աշխատավորների ամեն տեսակ շահագործողների ու ճնշողների ձեռքից՝ ամեն տեսակ շահագործմանը և ամեն տեսակ ճնշմանը մեկ անգամ ընդմիջող վերջ դնելու համար: Մեծ հեղափոխութիւններն ել հենց ձգտել են այդ հին շահագործողական պետական ապարատը կոտրել, բայց մինչև այժմ չեր հաջողվում այդ մինչև վերջն աւարտել: Յեւ ահա Ռուսաստանը, իր տնտեսական և քաղաքական դրութեան առանձնահատկութիւնների շնորհիւ, այժմ առաջինն է հասել պետական կառավարչութեան այդ անցմանը հենց աշխատավորների ձեռքը: Այժմ մենք, պատմական խլամից մաքրւած ուղու վրա, կառուցելու յենք սոցիալիստական հասարակութեան հզոր, պայծառ շենքը, ստեղծվում է պետական իշխանութեան նոր, պատմութեան

մեջ չտեսնված տիպ, վորը հեղափոխութեան կամքով կոչված է յերկիրը մաքրելու ամեն տեսակ շահագործումից, բռնութեանից և ստրկութեանից»:
(Մ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր ի վ ո ր ո տ) :

Լենինի այս խոսքերի մեջ մատնանշված է մեր հեղափոխութեան վճռողական տարբերութիւնը բոլոր մյուս հեղափոխութիւններից:

Բոլոր մյուս հեղափոխութիւնները, նույնիսկ լատադոյն դեպքում, աշխատավորների քաղաքական իրավունքների վորոշ ընդարձակումից և նրանց դրութեան ժամանակավոր թեթևացումից դենը չեն գնացել, յեթե բացառենք Փարիզի կոմունան իր կարճատե հաջողութեամբ, յերբ իշխանութիւնը աշխատավորների ձեռքին եր գտնվում: Այդ բոլոր հեղափոխութիւններն իշխանութիւնը թողնում էյին աշխատավորներին շահագործողների և ճնշողների ձեռքին: Շահագործողներից մեկ խմբին իշխանութեան ղեկի մոտ փոխարինում էյին մյուսները, բայց արտոնյալ դասակարգերն իրենց տիրապետող դրութեանից չեյին զրկվում: Այդ բոլոր հեղափոխութիւնների որով բուրժուազիային հաջողվում եր պահպանել իր իշխանութիւնը, բուրժուական դիկտատուրան:

Այս ամենը չեր կարող բուրժուական հեղափոխութիւններին մասնակցած աշխատավորներին վորոշ հիասթափութեան չրբել: Աշխատավորներն այդ հեղափոխութիւններին մասնակցել են իրենց նպատակներով, իշխանութեան տեր դասակարգների ճնշումից, վերջապես, ազատարկելու վերաբերյալ իրենց ձգտումներով ու հույսերով: Բայց բոլոր բուրժուական հեղափոխութիւնները հանդեցնում էյին այն բանին, վոր այդ ձգտումներն ու հույսերը յղարկվում էյին իշխանութիւնն իրենց ձեռքին պահած շահագործողական դասակարգների դիմադրութեանն ու փշրվում էյին: Այդ բոլոր հեղափոխութիւնները վերջանում էյին նրանով, վոր ժողովուրդն իրեն զգում եր չքայլարարված, նպատակի չհասած: Այդ բանը մասսաների

մեջ ծնեցնում եր հիասթափություն հեղափոխությանից, աշխատավորների անվտանգություն դեպի իրենց ուժերը, վորը ճնշող դատակարգերին հենց ձեռնառու յեր:

1917 թվի հոկտեմբերին տեղի ունեցավ համաշխարհային-պատմական շրջադարձ՝ նախկին հեղափոխություններից, բուրժուական տիպի հեղափոխություններից դեպի նոր, սոցիալիստական տիպի հեղափոխությունը: Պատմության մեջ առաջին անգամ տապալվեց շահագործողների իշխանությունը, հաղթեց բանվոր դասակարգի դիկտատուրան, պետական կառավարչությունն աշխատավորների ձեռքն անցավ: Աշխատավորները ստրուկներից, ճնշվածներից, շահագործվողներից վերածվեցին ազատ մարդկանց և իրենց բախտի կատարյալ տերերի: Բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, իշխանության գլուխ կանգնելով, առաջին անգամ հնարավորություն ստացան իրենց կյանքը կառուցելու այնպես, ինչպես իրենք են ցանկանում: Արմատական հարցը, իշխանության հարցը լուծելով, բանվոր դատակարգը՝ գյուղացիության հետ մեկտեղ սկսեց նոր կյանք, ձեռնամուխ յեղավ «սոցիալիստական հասարակության պայծառ շենքի» կառուցման:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությամբ աշխատավորների և մարդկության բոլոր լավագույն ներկայացուցիչների յերացներն իրականացան: Այդ ժամանակից սկսվեց հակադիր սիզբունքների վրա հիմնված յերկու աշխարհների մրցությունը, նոր աշխարհի մրցումը հնի դեմ, սոցիալիզմի մրցումը կապիտալիզմի դեմ: Բոլոր յերկրներում ուշադրությունը բեռված է այս մրցության վրա:

Հին հասարակության հիմքը մասնավոր սեփականությունն եր, յերբ արտադրության բոլոր միջոցները պատկանում էին կապիտալիստներին, հարուստներին: Կապիտալիստների իշխանությունը դրանով եր պահպանվում, կապիտալի հզորությամբ: Խորհրդային իշխանությունը լիկվիդացիայի յենթարկեց տնտեսության կապիտալիստական սխտեմը և վերացրեց արտադրության գործիքների ու

միջոցների մասնավոր սեփականությունը՝ հաստատելով տնտեսության սոցիալիստական սխտեմ և սոցիալիստական սեփականություն: Արտադրության միջոցներն ու գործիքները սկսեցին պատկանել կամ սոցիալիստական պետությանը, կամ մեր, սոցիալիստական կոլտնտեսություններին ու կոոպերացիային: Թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում նրանք սկսեցին ծառայել վո՛չ թե ուրիշների հաշվին առանձին անձերի հարստանալու շահերին, այլ ժողովրդի շահերին, աշխատավորների շահերին: Այս փոքր փոփոխություն չե՛, այլ հասարակության արմատական վերակառուցում, նրա տնտեսական հիմքի արմատական վերակերտում:

Հողի մասնավոր սեփականության վերացումը, ֆարերկաների և գործարանների մասնավոր սեփականության վերացումը, յերկաթուղիների և քաղաքների բնակելի տների մասնավոր սեփականության վերացումը և այդ տեսակի այլ միջոցառումները մեր յերկրում կապիտալիստական դատակարգերի և բոլոր պարազիտային, անաշխատ տարրերի լիակատար լիկվիդացիայի հանգեցրին: Մեղ մոտ ել չկան վո՛չ կապիտալիստներ, վո՛չ կալվածատերեր, վո՛չ կուլակներ, վո՛չ վաճառականներ, վո՛չ ժողովրդի հաշվին ապրող ուրիշ ձրիակերներ: Մեր որենքներն սկսեցին թույլ չտալ նրանց գոյությունը և վորեւ պարազիտների նոր յերևան գալը: Մեր հասարակարգը հիմնված է բանվորների և գյուղացիների բարեկամական հարաբերությունների վրա՝ բանվորների և գյուղացիների, վորոնք աշխատավորության խորհուրդների միջոցով կառավարում են յերկիրը և իրենց նոր կյանքն են կառուցում:

Արդյոք Հոկտեմբերյան հեղափոխության նպատակներն ել հենց սրանք չեյին: Անշուշտ, սրանք եյին: Ուրեմն, բանվոր դատակարգը՝ աշխատավոր գյուղացիների հետ մեկտեղ իշխանությունն իր ձեռքը վերցնելով, իսկապես այդ իշխանությունից թողտվեց՝ Հոկտեմբերյան հեղափոխության հիմնական նպատակներն իրականացնելու համար: Թե այդ նպատակներն ինչպիսի հսկայական հաջողություններով են

իրականացվել, թե մենք ի՞նչ ենք նվաճել, իսկ այժմ ել արդեն դրանցել մեր հիմնական որենքում,—այդ բոլորի մասին պարզ, հրեղեն—վառ խոսքերով խոսում ե խորհրդային Միության ընդունած Ստալինյան Սահմանադրությունը: (Ծ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր): Ստալինյան Սահմանադրությունը խոսում ե Հոկտեմբերյան հեղափոխության հաղթական հաջողության մասին, այն մասին, վոր մեր հեղափոխությունն իրականում հասել ե իր հիմնական նպատակին ե իր համար ճանապարհ ե մաքրել դեպի նոր մեծ նվաճումները:

Այստեղից՝ Հոկտեմբերյան հեղափոխության ե նրա ստեղծած նոր կարգերի միջազգային նշանակության աճումը:

Նոր կարգերի հիմքը աշխատավոր մասնաների մասնակցելն ե պետության կառավարման մեջ: Առանց դրան խորհրդային իշխանության վո՛չ մի հաջողության մասին խոսք անգամ չեք կարող լինել: Միայն շնորհիվ այն բանի, վոր մեր յերկրում հաղթել ե պրոլետարիատի դեմոկրատության ե իրականացված ե բարձրագույն տիպի դեմոկրատիզմը, սոցիալիստական դեմոկրատիզմը, վորը պետություն կառավարման մեջ բոլոր աշխատավորները մասնակցության համար անսահմանափակ հնարավորություններ ե բաց անում, միայն այդ բանի շնորհիվ գոյություն ունի ե անչեղորեն ամրանում ե խորհրդային պետությունը: (Ծ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր):

Այս դեմոկրատիզմը բուրժուական պետությունների դեմոկրատիզմին նման չե: Ով այս չի՛ հասկացել, նա սոցիալիստ չե, պրոլետարական հեղափոխական չե, նա չի՛ կարող աշխատավորությունը կապիտալի ճնշումից ազատագրելու գիտակից կողմնակիցը լինել:

Դեմոկրատական տիպի բուրժուական պետություններում քաղաքացիների իրավունքների ձևական հավասարություն են հռչակում, բայց այդ քաղաքացիներից վոժանք՝ ինչպես վոր յեղել եյին, այնպես ել միում են վորպես չա-

հաղորդվողներ ու ճնշվողներ, իսկ մյուսները՝ իրենց ժողովրդի շահաղործողներ ու ճնշողներ: Նույնիսկ ամենադեմոկրատական բուրժուական յերկրում աշխատավորների համար դեմոկրատիան սահմանափակված ե նեղ շրջանակներով ե հանդուրժվում ե միայն այն չափով, ինչ չափով այդ չի խախտում շահաղործողական դասակարգերի տիրապետող դրությունը: Բուրժուական յերկրներում դրության տերերը դեմոկրատիզմն ոգտաղործում են իրենց շահերի համար, իսկ աշխատավորների քաղաքական իրավունքների ամեն մի ընդլայնումը դեմ ե առնում համառ դեմադրության:

Մեր կարգերն այլ բանի վրա յեն հիմնված: Մեր կարգերն այնքան ավելի ամուր են դառնում, վորքան աշխատավորներն ավելի ակտիվ ու ավելի բաղձալիցմանի յեն մասնակցում պետության կառավարման մեջ:

Ստալինյան Սահմանադրությունը տվեց ա՛յն բանի նոր ապացույցը, վոր մենք կանգնած ենք աշխատավորության դեմոկրատիզմի ամենակողմանի զարգացման հողի վրա, վոր մենք դնում ենք աշխատավորների մասնակցությունը պետության գործերում ե մեր ամբողջ հասարակական կյանքում ամեն կերպ ուժեղացնելու ուղիով: Մեր կարգերի դեմոկրատիզմը բնորոշվում ե վո՛չ միայն նրանով, վոր խորհրդային Միության բոլոր քաղաքացիների համար վերացված են բնորական իրավունքների ամեն տեսակ սահմանափակումները, վո՛չ միայն նրանով, վոր կինը կատարելապես իրավահավասար ե տղամարդուն, վո՛չ միայն նրանով, վոր ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները կատարելապես իրավահավասար են, ե հետամնաց ազգություններին ուժեղացրած պետական ոգնություն ե ցույց տրվում: Մեր կարգերի դեմոկրատիզմը, բացի դրանից, բնորոշվում ե նրանով, վոր մեր Սահմանադրությունը խոսում ե աշխատավորների այնպիսի իրավունքների մասին, ինչպիսին ե աշխատանքի իրավունքը, հանդատի իրավունքը, անվճար կրթության իրավունքը՝ ընդհուպ մինչև բարձրագույն

կըթուլթյունը բոլոր աշխատավորների համար: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր): Վո՛չ մի նման բան չգիտեն բուրժուական պետութիւնները տահմանադրութիւնները, ներառյալ և ամենադեմոկրատականները դրանցից: Աշխատավորների այդպիսի իրավունքների մասին խոսում է միայն Ստալինյան Սահմանադրութիւնը, հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրութիւնը, սոցիալիստական դեմոկրատիզմի Սահմանադրութիւնը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր):

Նայեցեք վո՛չ միայն Սահմանադրութիւնը: Վերցրեք հասարակ փաստերը: Վերցրեք այնպիսի փաստ, ինչպիսին է հասարակական վերաբերմունքը դեպի աշխատանքի հասարակ մարդիկ, թեկուզ դեպի նրանք, ում մենք անվանում ենք Փարբիկաների, դործարաններ, կոլտնտեսութիւններ, ստախանովականներ: Մեր յերկրում արտադրութիւն մեջ աշխատանքի լավ որինակներ ցույց տված հասարակ բանվորներն ու բանվորուհիները, հասարակ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները ստանում են ընդհանուր հռչակ ու պատիվ: Վո՞ր յերկրում է հնարավոր, վոր հասարակ բանվորները ու գյուղացիները յեւած ստախանովականները, վորոնք յերեկ դեռ վոչ վորի հայտնի չեյին, հայտնադույն անուններ և ժողովրդի սիրելիներ են դառնում միայն այն պատճառով, վոր Փարբիկայում կամ այլ հասարակական տնտեսութիւն մեջ աշխատանքի լավ որինակներ են տվել: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր): Միթե՞ վորեւէ նման բան հնարավոր է բուրժուական յերկրներում, վորտեղ բանվորի բուն աշխատանքով իսկապէս վոչ-վոք չի հետաքրքրվում, իսկ դործատերը, վորի համար բանվորն աշխատում է, միայն մի բանով է հետաքրքրվում—այդ աշխատանքից ստացվող շահույթով:

Վո՛չ մի բուրժուական յերկրում հնարավոր չէ պատկերացնել այնպիսի դրութիւն, վորպեսզի աշխատանքի հասարակ մարդիկ, իրենց լավ աշխատանքի համար, հայտնի դառնան ամբողջ ժողովրդին: Իսկ մեզ մոտ այդ սովորու-

թիւն է դարձել: Մեզ բոլորիս հայտնի յե, վոր այդ կատարվում է վո՛չ ի վնաս դիտութիւն և արվեստի մարդկանց, վո՛չ ի վնաս տնտեսութիւն ու կուլտուրայի շինարարների: Մեր շինարարութիւն բոլոր ճյուղերի և ստեղծագործական գործունեյութիւն բոլոր տեսակների ակնաւոր ներկայացուցիչները, մեր ամբողջ աշխատավորական ինտելիգենցիան շրջապատված են հասարակութիւն ու շաղկութիւնով և պետութիւն ակտիվ ոժանդակութեամբ: Աշխատելով ժողովրդի համար, գործի այս կամ այն ճյուղն աշխատեն դեկավարելով, մեր դեկավարները «բոլոր հիմունքներն ունեն վայելելու ժողովրդի վստահութիւնն ու սերը», ինչպէս այդ մատնանչել է ընկեր Ստալինը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր): Այնպիսի կարգերը, վորտեղ աշխատավորներն իշխանութիւն գլուխ են կանգնած ու վորտեղ աշխատանքի մարդուն հասարակութիւն մեջ պատվաւոր տեղ է պատկանում, չեն կարող չգրավել բոլոր յերկրների աշխատավորների համակրանքը: Նոր, խորհրդային կարգերի միջազգային նշանակութիւնն աճում է մեր աչքի առաջ:

Այնուհետև: Հայտնի յե նույնպէս խորհրդային պետութիւն դերը միջազգային հարաբերութիւնների մեջ: Ժողովուրդների մեծ բարեկամութիւն վրա հիմնված՝ ԽՍՀՄ մյուս պետութիւնների շարքում հատուկ դերք է գրավում խոշորագույն միջազգային անցքերում:

Բավական է ասել այն դերքի մասին, վոր Խորհրդային Միութիւնը գրավել է իր դեմոկրատական իրավունքների և ազատութիւն համար մարտնչող խաղանական ժողովրդի նկատմամբ: Խորհրդային Միութիւնը վո՛չ միայն չի թաղցրել իր համակրական վերաբերմունքը դեպի հանրապետական Իսպանիան, այլև բացահայտորեն հայտարարել է, վոր իսպանական դեմոկրատիկ հանրապետութիւն գործը համարում է իրեն մոտիկ գործ, ամբողջ առաջադեմ մարդկութիւն գործ: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր: Մ ի ր ա ց ա կ ա ն չ ու թ յ ու ն՝ «Վիվա՛ տ կամրադ Ստալին»: Փ ո թ ո ր կ ա ի ց ծ ա փ ա հ ա ր ու

Քյուլինգեր: Բացակայում է Քյուլինգեր՝ «Կեցե՛հ՝ հանրապետական Իսպանիան: Ուռա՛»): Իսկ վորքան հեռու յեն իսպանական դեմոկրատիային աջակցելու այս ազնիվ դիրքից այն պետությունների կառավարությունները, վորոնք, սակայն, անտրամադիր չեն իրենց դեմոկրատական յերկրներ ձևացնելու:

Կամ վերցրե՛ք Չինաստանում տեղի ունեցող անցքերը: Ի՛ր համակրանքը չինական ժողովրդին և վերաբերմունքը դեպի ճապոնական ազդեցության խորհրդային Միությունն արտահայտել և արդեն չհարձակման վերաբերյալ խորհրդային-չինական պակտ կնքելով: (Ծափահարություն): Բայց դեռ հայտնի չէ վո՛չ մի քայլ, վոր արած լինեյին մյուս պետությունները՝ հակադդելու համար այն անուր ազդեցության, վոր կիրառվում է չին ժողովրդի դեմ: Այստեղ ևս խորհրդային Միությունը տեղությունների խմբից չոկնվում է իր հատուկ դիրքով, իր ազնիվ վերաբերմունքով և անկեղծ համակրանքով դեպի այն ժողովուրդը, վորն ոտարեկրյա ազդեցության յե յենթարկվել: (Ծափահարություն):

Խորհրդային Միության միջազգային քաղաքականությունն այս բոլոր տարիների ընթացքում անփոփոխ է յեղել: Խաղաղության ավելի հավատարիմ և հետևողական կողմնակից վո՛չ-վո՛ք չի մատնանչի: Ծիշտ կլինի, յեթե ասենք, վոր խաղաղության քաղաքականության հետևողական կիրառման և խաղաղ միջազգային հարաբերություններն ամրացնելու ձգտման մեջ իր արտահայտությունն է գտնում մեր յերկրի վստահությունը դեպի իր ուժերը: (Ծափահարություն): Մեզ մոտ տեղի յե ունենում ժողովրդական տնտեսության անչեղ աճում, կուլտուրական շինարարության անչեղ վերելք, և մենք արտաքին ավանտյուրանների վո՛չ մի կարիք չունենք: Թող դրանով զբաղվեն ուրիշները, յեթե նրանց վոտքերի տակ հոգն այնքան վառվում է: (Ծիծաղ, ծափահարություն): Բայց չեմ թաղցնի, մենք հոգ ենք տանում Կարմիր Բանակի և


նրա հզորություն մասին (փոքրկալից ծափահարություն) և չենք մոռանում ավանտյուրանների հնարավորությունը, մասնավոր Փաշիստների կողմից:

Բայց ամենակարևորը, ինչով այժմ արտահայտվում է ԽՍՀՄ միջազգային նշանակությունը, այդ—Խորհրդային Միության հատուկ քաղաքական ազդեցությունն է մյուս յերկրների աշխատավորության մտքերի և տրամադրությունների վրա:

Յեթ առաջվա հեղափոխություններն աշխատավորության մեջ ծնեցնում էյին հրապարակություն հեղափոխական պայքարից, ծնեցնում էյին թերահավատություն դեպի իր ուժերը, ապա մեր հեղափոխությունը և նրա պանծալի քանամյակն ունեն ուրիշ, ուղղակի հակառակ ազդեցություն: Այժմ արդեն պետք չէ ապացուցել, վոր աշխատավորները կարող են յուր գնալ առանց կապիտալիստների ու կալվածատերերի, վոր աշխատավորների իշխանությունը մեր ժամանակում ամենամեծ ուժն է: (Ծափահարություն): Դրանում կասկածողներն այժմ իրենց ձեռքերով կարող են չոչափել նոր կարգերը և խորհուրդների իշխանության ներքո նրա ունեցած նվաճումները: Գտնված է աշխատավորների իշխանության կենսունակ ձևը, բացառահայտված է և նրա սոցիալիստական բովանդակությունը: Բուրժուական հեղափոխությունները շատ բան են արել նրա համար, վորպեսզի խախտեն աշխատավորների վստահությունը դեպի իրենց ուժերը: Բայց, կհարցնենք մենք, միթե՞ Հոկտեմբերյան հեղափոխությունը և մեր խորհրդային կարգերը քիչ բան են արել այդ անվստահությունը փշրելու և աշխատավորների վոգին ամբողջ աշխարհում բարձրացնելու համար:

Յերբեմն կարող եր թվալ, թե աշխատավորները քիչ ուժ ունեն, թե կապիտալիզմի գերությունից դուրս պրծնելու համար այդ ուժերը չեն բավականացնի: Այդ տեսակ նախապաշարումներ պատվաստելու, իր ուժերի նկատմամբ այդ թերահավատությունը պատվաստելու համար բուրժուազիան արել է ամեն բան, որ իր մոտ ծառայու-

08-5959
16-9776



ՄԻՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Թյան և վերցրել զըսաններում կեղծ-սոցիալիստական տոմս ունեցող ամեն տեսակի «սոցիալիստներ»։ Մինչդեռ, իհարկե, բանն աշխատավորների ուժերի պակասը չէ։ Բանը մասսաների կազմակերպվածության պակասն է միայն, իսկ վոր գլխավորն է՝ դասակարգային գլխակցության պակասը։

Նորհրդային Միությունն իր մեծ սոցիալիստական նվաճումներով հարված է հասցնում այդ բոլոր նախապաշարումներին, բանվորական և գյուղացիական մասսաներին հավատ ներշնչելով դեպի իրենց ուժերը։ Մարգարեություններով չենք զբաղվի, այլ միայն մեկ փաստ կհիշեցնենք։ Արդյո՞ք մեր յերկրում Հոկտեմբերի հաղթությանը՝ հավատացած շատ մարդիկ կային, թեկուզ հենց Հոկտեմբերյան ապստամբությունից ընդամենը մի քանի ամիս առաջ։ Այնքան ել շատ չկային։ Այդ ժամանակից հետո դրությունը իրատ փոխվել է։ Ել ինչ ասել կուզի այն մասին, վոր իՄՂՄ մեջ սոցիալիզմի հաղթելը խախտում է ամբողջ աշխարհի աշխատավորների կողմից իրենց ուժերի նկատմամբ տածած անվստահության արմատները։ Այդ հաղթությունը շատ կողմերով թեթևացնում է կապիտալիստական ճնշումից ազատագրվելու մասին յերազող աշխատավորների դրությունը։ Չ'ի կտրելի տարակուսել, վոր այդ միտքն արագորեն հասունանում է շատ յերկրների աշխատավորների մեջ։ Աշխատավորների անվստահությունը դեպի իրենց ուժերն այժմ ավելի ու ավելի արագ է անհետանալու։ Վերհիշենք, թե Լենինը դեռ նախահոկտեմբերյան որերին ինչպես եր սովորեցնում մեզ, վոր «ամենազլխավորն է՝ ճնշվածներին և աշխատավորներին վստահություն ներշնչել դեպի իրենց ուժերը»։

Հոկտեմբերյան հեղափոխության յերկու տասնամյակների փորձով միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները շատ նոր բան սովորեցին, այլ կերպ սկսեցին վերաբերվել իրենց ուժերին, սկսեցին հրաժարվել իրենց հաղթության հնարավորությանը չվստահելու նախապաշարումներից—այս է մեր հաղթության գլխավոր, և իսկապես միջազգային, նշանակությունը։

Մեր յերկրում սոցիալիզմի ունեցած հաջողությունները հասկանալու համար հարկավոր է մեր որերի Նորհրդային Միությունը համեմատել նախահեղափոխական Ռուսաստանի հետ։ Ի՞նչ եր մեր յերկրը և ի՞նչ է նա դարձել։

Նախահեղափոխական Ռուսաստանում իշխանության գլուխ կանգնած էին կապիտալիստներն ու կալվածատերերը՝ ցարի գլխավորությամբ, վորին ժողովրդի մեջ «Ռուսաստանի առաջին կալվածատեր» էին անվանում։ Ռուսաստանը հետամնաց յերկիր եր, առավելապես հողագործական։ Արդյունաբերությունը թույլ եր զարգացած և շատ բանով մյուս պետությունների արդյունաբերությունից հետ եր մնում։ Լենինն այն ժամանակվա Ռուսաստանի մասին ասել է, վոր նա «անասելի, չտեսնված հետամնաց յերկիր եր, աղքատ ու կիսալայրենի, արտագրության ժամանակահից դործիքներով սարքավորված եր՝ Անգլիայից քառապատիկ վատ, Գերմանիայից՝ հնգապատիկ վատ, Ամերիկայից՝ տասնապատիկ վատ»։ Առանձնապես հետ եր մնում ծանր արդյունաբերությունը, վորը տալիս է այնպիսի հարկավոր արտադրանք, ինչպես են՝ ամուլը, նավթը, հանքանյութը, յերկաթը, մեքենաները, քիմիական նյութերը։ Յերկրի հարստագույն ընդերքը վատ եր չահագործվում։ Յեւ այս բոլորով հանդերձ՝ արդյունաբերության խոշորագույն ճյուղերում գլխավոր դործատերերը վո՛չ թե ռուս, այլ ոտաղերում գլխավոր դործատերերը վո՛րն էին։ Իրենց Ֆարերիկաների և դործարանների ոտքավորումը մեծ մասամբ գնում էին արտասահմանում։ Ամեն բանում յերևում եր յերկրի արդյունաբերական հետամնացությունը։

Գյուղում ամբողջովին իշխում էին կալվածատերերն ու կուլակները, որբյաղնիկներն ու գեմսովային պետերը։ Լենինի խոսքերով ասած՝ մենք ունեյինք հետեյալը.

«Մոտ 70 միլիոն դեսյատին հող 30·000 խոշորագույն կալվածատերերի ձեռքին և մոտավորապես նույնքան եւ 10 միլիոն գյուղացիական տնտեսությունների ձեռքին—այս ե պատկերի հիմնական ֆոնը»:

Միքանի միլիոն գյուղացիներ բոլորովին առանց հողի ե առանց ցանքի եյին մնում: Գյուղացիների մեծամասնությունը տառապում եր սակավահողությամբ: Գյուղի յերկու յերրորդը բաղկացած եր սովահար չքավորությունից: Չքավորության և միջակների ճնշող մասսան հին պապեհական յեղանակներով՝ արորի ոգնությամբ եր մշակում իր և կալվածատիրոջից վարձակալած հողի կտորները: Շատ տեղերում գյուղում տարածված եր կոռի սխտեմը, այսինքն կալվածատիրոջ հողի մշակումը գյուղացիների կողմից՝ վերջիններիս աղքատիկ ինվենտարով:

Հոկտեմբերյան հեղափոխությունը տեղի ունեցավ իմպերիալիստական պատերազմի չորրորդ տարում,—այն պատերազմի, վորը քայքայել եր Ժողովրդական տնտեսությունը և Ժողովրդական մասսաների դրության ծանրությունը ծայրահեղության եր հասցրել: Շուտով դրան ավելացան նոր աղետներ, քանի վոր կալվածատերերն ու կապիտալիստները, ոտաբերկրյա ինտերվենտների աջակցությամբ, մեր վրին վաթաթեցին յերկարատե քաղաքացիական պատերազմ, վորը նույնպես յերեք տարուց ավելի Ժամանակ խեց: Քաղաքացիական պատերազմը մեզնից հսկայական զոհեր պահանջեց: Քաղաքացիական պատերազմի վերջերին արդյունաբերության, յերկաթուղիների և գյուղատնտեսության անկումը ծայրահեղ աստիճանի հասավ: Գյուղատնտեսությունը նախապատերազմյան արտադրանքի հազիվ յերկու յերրորդն եր տալիս: Արդյունաբերությունն ե՛լ ավելի ցած եր ընկել և 1920 թվին նախապատերազմյան արտադրանքի մեկ վեցերորդից ել պակաս տվեց:

Այսպիսի քայքայման պայմաններում խորհրդային իշխանությունը ձեռնամուխ յեղավ Ժողովրդական տնտեսության վերականգնման, գյուղատնտեսության ու արդյունաբերու-

թյան, տրանսպորտի ու առևտրի բարձրացման: Թվում եր, թե հարկավոր են լինելու յերկար տարիներ: Բուլճերիկները թշնամիները չարախնդում եյին: Իսկ վերջիվերջո ի՞նչ դուրս յեկավ: Դուրս յեկավ այնպես, վոր մեր յերկրի աշխատավորները հաղթականորեն գլուխ բերին այդ խնդիրը կարճ Ժամանակամիջոցում:

Յեթե ամբողջ խոշոր արդյունաբերության արտադրանքը (1926/27 թ. դեբրով) 1913 թվին կազմում եր 11 միլիարդ ռուբլի, իսկ 1920 թվին սահեց մինչև 1,7 միլիարդ ռուբլին, ապա ընթացիկ 1937 թվին այն հասնելու յե ավելի քան 90 միլիարդ ռուբլու: Այս նշանակում ե, վոր արդյունաբերական արտադրանքը նախապատերազմյան մակարդակի հանդեպ արդեն ավելացել ե ավելի քան 8 անգամ: Սրան ավելացրեք ևս մեկ բան՝ արդյունաբերական արտադրանքի մատնանշված նախապատերազմյան մակարդակին մենք հասանք միայն 1926 թ.: Այսպիսով, նախապատերազմյան մակարդակի հանդեպ արդյունաբերական արտադրանքի ավելի քան 8 անգամ ավելանալը տեղի յե ունեցել վերջին 11 տարիների ընթացքում: Այժմ արդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատանքը ծավալված ե ամբողջ թափով: Շատ ճյուղերում կատարված ե արմատական վերակառուցում՝ Ժամանակակից առաջավոր տեխնիկայի հիման վրա: Մի շարք խոնակակից առաջավոր տեխնիկայի հիման վրա: Մի շարք խոնակակից արդյունաբերական ճյուղեր, այն ե՝ մեքենաշինության, չոր արդյունաբերական ճյուղեր, այն ե՝ ճյուղերը նոր են ստեղծվել: Նախահեղափոխական Ռուսաստանի արդյունաբերությունը մյուս յերկրների շարքում զբաղել եր հինգերորդ տեղը, Յեվրոպայում՝ չորրորդ տեղը: Այժմ արդյունաբերության ընդհանուր արտադրանքով ԽՍՀՄ-ից առաջ են կանգնած միայն Ամերիկայի Միացյալ Նահանգները: Խորհրդային Միության արդյունաբերությունը Յեվրոպայում առաջին տեղն ե դուրս յեկել: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ե ր):

Բանվորների կենցաղային պայմաններում կտրուկ փոփոխություն ե կատարվել: Դեռևս սրանից 10 տարի առաջ

մենք ունեյինք մեկ և կես միլիոն դործազուրկ: Բայց ահա արդեն մի քանի տարի յե, վոր մեզ մոտ գործազուրկութուն չկա, գործազուրկներ չկան: Յեւլ այս ա՛յն ժամանակ, յերբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կա 9—10 միլիոն դործազուրկ, Գերմանիայում՝ ավելի քան 3 միլիոն դործազուրկ, Անգլիայում՝ 2 միլիոն դործազուրկ: Հոկտեմբերյան հեղափոխութեան տասնամյակին խորհրդային իշխանութիւնը հռչակեց արդունարեւական բանվորները անցումը յոթամյա աշխատանքային որվա, և այս վորոշումը կենսագործվեց. եւ չենք խոսում այն մասին, վոր ստորեւկըյա և մի քանի այլ դժվար աշխատանքներում մեզ մոտ միշտ եւ վեցամյա աշխատանքային որ ե յեղել: Կապիտալիզմի պայմաններում բանվորները վոչ մի յերկրում այսպիսի կարճ աշխատանքային որվա մասին չեն կարող յերազել: Մեր յերկրում արդունարեւութեան մեջ զբաղված բանվորներին թիվը և նրանց աշխատավարձն անշեղորեն աճում ե: Դեռևս 1928 թիին աշխատավարձի ընդհանուր Փոնդը կազմում եր 8 միլիարդ ռուբլուց մի քիչ ավելի, իսկ ընթացիկ 1937 թիին այն կազմելու յե ավելի քան 80 միլիարդ ռուբլի: այսինքն ավելացել ե մոտավորապես 10 անգամ: (Մ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր):

Դուք գիտեք այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան քաններորդ տարեդարձի կապակցութեամբ հրապարակված ե կառավարութեան դեկրետ՝ ցածր վարձատրութիւն ստացող բանվորներին աշխատավարձը բարձրացնելու մասին, վորի համար այս տարվա վերջին յերկուամիսների համար հատուկ կերպով հատկացված ե 100 միլիոն ռուբլի և 1938 թիին համար 600 միլիոն ռուբլի: (Մ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր): Մինչդեռ կապիտալիզմի բոլոր յերկրներում՝ և՛ Գերմանիայում, և՛ Իտալիայում, և՛ Ճապոնիայում, և՛ Միացյալ Նահանգներում, և՛ Անգլիայում վերջին տարիներին ընթացքում տեղի յե ունեցել բանվորների աշխատավարձի վո՛չ թե ավելացում, այլ իջեցում:

Այս ամենը պերճախոս կերպով ասում ե այն մասին,

վոր խորհրդային Միութեան արդունարեւութեան աճման հաջողութիւնները, ինչպես և սոցիալիզմի մյուս հաջողութիւնները, տանում են դեպի բանվորական մասսաների դրութեան արմատական բարելավումը:

Մեր գյուղատնտեսութեան մեջ իսկական հեղափոխութիւն ե կատարվել տեխնիկայի մեջ և դործի կազմակերպման ասպարեզում: Վերջին մի քանի տարվա ընթացքում գյուղատնտեսութիւնը վերակառուցվել ե վորպես խոշոր սոցիալիստական տնտեսութիւն՝ կոլտնտեսութիւնների և խորհտնտեսութիւնների հիման վրա: Կոլտնտեսային կարգերը վերջնականապես հաղթել են: Մեքենատրակտորային կայաններն իրենց մեքենաներով սպասարկում են, փոքրիկ բացառութեամբ, բոլոր կոլտնտեսութիւններին: Կոլտնտեսային և խորհտնտեսային տնտեսութեան մեջ տրակտորների քանակը հասել ե 450 հազարի, իսկ նրանց կարողութիւնն այժմ կազմում ե ավելի քան 8 միլիոն ձիու ուժ: Դաշտերում արդեն կան ավելի քան 120 հազար կոմբայներ: Բացի դրանից, կոլտնտեսութիւններում և խորհտնտեսութիւններում աշխատում են մոտ 120 հազար բեռնատար ավտոմոբիլներ:

Բացի այն հողերից, վոր առաջներում գտնվում եին գյուղացիների ձեռքին, խորհրդային իշխանութիւնը գյուղացիներին հանձնել ե ավելի քան 150 միլիոն հեկտար նախկին կալվածատիրական, արքունի և վանքապատկան հողեր: Կոլտնտեսային և խորհտնտեսային դաշտերի բերքատուլութիւնն աճում ե: Այս տարի մենք հավաքել ենք մոտ 7 միլիոնն աճում ե: Այս տարի մենք հավաքել ենք մոտ 7 միլիարդ փութ հացահատիկ (ժ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն ն ե ր), վորպիսի բան մեր յերկիրը դեռևս յերբեք չեր տեսել: Նշանակալիորեն բարձրացել ե բամբակի և ձալնդեղի բերքատուլութիւնը: Ամբողջ գյուղատնտեսական ձալատում պայքար ե զնում բերքատուլութեան բարձրացման համար, գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականութեան ավելացման համար:

Նախահեղափոխական Ռուսաստանում գյուղացիութեան

մեծամասնութիւնը բաղկացած էր սովահար չքավորութիւնից: Դեռևս սրանից 10 տարի առաջ մենք այնպես էինք համարում, վոր դյուղի վոչ-պակաս քան մեկ յերրորդը կազմում է չքավորութիւնը: Այժմ դյուղում մենք այլևս չքավորութիւն չունենք: Ամբողջ աշխատավոր դյուղի հետ միասին՝ չքավորները կոլտնտեսութիւններում նոր, իսկապես ունեւոր և իսկապես կուլտուրական կյանք են կառուցում: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր):

Խորհրդային իշխանութեան հողատարութիւնը կոլտնտեսային դյուղացիութեան մասին այս տարի արտահայտվեց մի շարք նոր հատուկ միջոցառումներով: Զխոսելով արդեն նորերս հրապարակած վորոշման մասին, վորով կոլտնտեսականներին արտոնութիւններ են տրվում պետութեանը կաթ հանձնելու դործում, այս տարի խիստ իջեցված են պետութեանը հաց հանձնելու և մեք.-տրակտ. կայաններին աշխատանքի բնաւձարի նորմաները: Նորմաների այդ իջեցումը հասնում է ավելի քան 20 %-ի անցյալ տարվա հանդեպ: Զեղչված են նաև անցյալ տարիներում պետութեան կողմից կոլտնտեսութիւններին ընձեռած հացի փոխաւ՝ սովութիւնները: Հացահատիկի վերաբերյալ այս բոլոր արտոնութիւնները միայն այս տարի կազմում են մոտ 600 միլիոն փութ, վորն այժմ մնացել է հենց իրենց կոլտնտեսութիւնների ու կոլտնտեսականների ձեռքին: Մենք ինչ-վոր չենք լսել, վոր կապիտալիստական յերկրներում դյուղացիութեան բարորութեան մասին նույն այս տեսակ հողատարութիւն արտահայտվի:

Ուրեմն դյուղացիներն ու բանվորները թո՛ղ համեմատեն, թե սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող մրցութեան մեջ ճշմարտութիւնն ո՛ւմ կողմն է: Բանվորներն ու դյուղացիները սրանից թող իրենց յեզրակացութիւններն առնեն: Հաւանաբար, այդ յեզրակացութիւնները կապիտալիզմի ոգտին չեն լինի, բայց դրա փոխարեն մեր կարգերի ոգտին կլինեն: (Մ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր):

Խորհրդային Միութեան տնտեսական աճման ընդհանուր

արտահայտութիւնը մենք տեսնում ենք յերկրի ժողովրդական յեկամտի աճման մեջ: Հայտնի յե, վոր ցարական Ռուսաստանում բնակչութեան իննը տասերորդը բաղկացած էր ընչադուրկ և չունեւոր մասսայից, վորի ձեռքն անցնում էր ժողովրդական յեկամտի մոտավորապես մեկ քառորդը: Այլ կերպ ասած, բնակչութեան մեկ տասերորդ մասը, վոր բաղկացած էր հարուստ մարդկանցից, գուրում, իր գլուպանն էր լցնում ժողովրդական յեկամտի մնացած յերեք քառորդը: Այդ ժամանակից հետո դեռութիւնը կտրուկ կերպով փոխվել է: Այժմ ամբողջ ժողովրդական յեկամտուն անցնում է աշխատավորութեան ձեռքը, ըստվորում ժողովրդական յեկամտի 99 տոկոսն անցնում է սոցիալիստական տնտեսութեան մեջ դրաւված բանվորներին, ծառայողներին և դյուղացիներին ձեռքը և միայն մեկ հարյուրերորդն է բաժին ընկնում մենատնտես և չկոոպերացված տնայնադործ աշխատավորներին: Նախապատերազմյան ժամանակի հետ համեմատած՝ ժողովրդական յեկամտի ընդհանուր չափն այս տարի ավելացել է հինգ անգամ: Սրանք են փաստերը, վորոնց մասին պետք է իմանալ:

Միքանի խոսք մեր յերկրի կուլտուրական աճման մասին:

Ահա՛ ամենից ավելի կարեւոր թվերը: Բոլոր ուսումնական հաստատութիւններում սովորողներին ընդհանուր թիվը, վոր 1914 թվին 8 միլիոն էր, անցած տարի բարձրացել է 38 միլիոնի յեր հասել: Այսպիսով, 4,7 անգամ ավելացում: Այնպիսի հանրապետութիւններում, ինչպես են՝ Լատվիական, Տաջիկական, Թուրքմենական, Կիրգիզական Ուզբեկական, Տաջիկական, սովորողների քանակն աճել է հանրապետութիւնները, սովորողներին քանակն աճել է տասնյակ անգամներ: Տարրական դպրոցն այժմ ընդգրկել է բոլոր յերեխաներին: Միջնակարգ դպրոցներում սովորողներին քանակը նախահեղափոխական ժամանակի հետ համեմատած աճել է 18 անգամ: Բարձրագույն ուսումնական մեմատած աճել է 18 անգամ: Բարձրագույն ուսումնական մեմատած աճել է 18 անգամ: Այժմ մեր բուհերում սովորում են մարյա հինգ անգամ:

540 հազար ուսանողներ: Ընդգրկում, բացի այն բանից, վոր բոլոր դպրոցներում, այդ թվում և բարձրագույն դպրոցներում, ուսումը անվճար է, բարձրագույն ուսումնական հաստատությունների ավելի քան 440 հազար ուսանողներ և հատուկ միջնակարգ դպրոցների (տեխնիկականների, բանվորական ֆակուլտետների և այլն) մոտ 600 հազար սովորողներ, այսինքն բարձրագույն և միջնակարգ դպրոցների ավելի քան 1 միլիոն սովորողներ պետական թոշակներ են ստանում: Լայնորեն ծավալված են հասակավորների հանրակրթական դպրոցները, վորտեղ սովորում են մոտ 9 միլիոն մարդ: Բացի մատնանշված 38 միլիոն սովորողներից, բանվորական և կոլտնտեսային զանազան հատուկ դասընթացներում սովորել են 6,3 միլիոն հոգի և նախադպրոցական հիմնարկներում նախապատրաստական ուսում են ստացել 4,3 միլիոն յերեխաներ:

Լրագրերի քանակը, գրքերի բացթողումն ու նրանց տիրաժներն աճել են բազում անգամ: Առանձնապես արագ և աճում ազգային լեզուներով տպագրվող լրագրերի տիրաժը և գրքերի հրատարակությունը: Խորհրդային իշխանության որով սկսվեց առաջնորդում ծանր, խեղճ վիճակում գտնվող ազգային կուլտուրաների իսկական ծաղկումը: Կուլտուրական շինարարության հսկայական աճման մասին խոսում է լուսավորության վրա արվող մեր ծախսերի աճումը: Վերջին 10 տարիների ընթացքում լուսավորության վրա արվող ծախսերը, ամբողջությամբ առած, ավելացել են 33 անգամ: (Մափա հարու թյուր ընկեր): Ընթացիկ 1937 թվին դրանք հասնում են ավելի քան 18 միլիարդ ռուբլու:

Բուրժուական յերկրները թո՛ղ չափվեն այս փաստերի հետ: (Մափա հարու թյուր ընկեր): Այդ յերկրներից վո՛չ մեկը չի կարող այս թվերին հակադրել գործի վորևէ չափով նկատելի բարելավում կուլտուրայի բնագավառում, բայց դրա փոխարեն քիչ չեն գտնվի այնպիսի յերկրներ, վորոնք վերջին 10—20 տարիների ընթացքում իրենց կուլտու-

րական շինարարության մեջ վո՛չ թե առաջ են գնացել, այլ հետ:

Խորհրդային կարգերի այս հաջողություններն ինչի՞ վրա յեն հիմնված:

Նույն այն բանի վրա, ինչի վրա վոր հիմնված են Հոկտեմբերյան հեղափոխության և մյուս բոլոր հաջողությունները: Դրանք հիմնված են, ամենից առաջ, ամբողջ սոցիալիստական շինարարությանը դեկամբրոզ բուլեիկների կուսակցության ճիշտ քաղաքականության վրա: (Մափա հարու թյուր ընկեր): Սոցիալիզմի բոլոր հաջողությունները մեջ, մեր բոլոր հաղթությունների մեջ մենք տեսնում ենք լենինիզմի ամենահաղթ ուժը: (Մափա հարու թյուր ընկեր): Մենք հաղթեցինք լենինիզմին հավատարիմ մնալով: (Մափա հարու թյուր ընկեր): Մեզ այ՛ս է սովորեցրել և սովորեցնում է ընկեր Ստալինը: (Փոքոր կալից, յերկարատև ծափա հարու թյուր ընկեր):

Լենինի—Ստալինի կուսակցության մեզ հաղթությանից հաղթություն է տարել՝ հոկտեմբերյան ապստամբության որերին. այն շրջանում, յերբ հարկավոր եր իմպերիալիստական սպանդի կրակից դուրս պրծնել. քաղաքացիական պատերազմի և ինտերվենտներին զինված հակահարված տալու հերոսական տարիներին. նեպին անցնելիս, յերբ մենք, այսպես ասած, նոր ռելսերի եյինք անցնում. յերկրի սոցիալիստական ինդուստրացումը ծավալելիս. այն ժամանակ, յերբ դուռը ցուցված լուսնը կուլեկտիվացման ուղուն եր անցնում. մեր յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթություն տանելու տարիներին: Մենք անցել ենք մեծ դժվարություններով և քիչ զրկանքներ չենք կրել: Մենք պետք է հետ խելինք դերք դերքի հետևից, միայն մեր սեփական ուժերի վրա հույս դնելով: Մեր ամբողջ քաղաքականության մեջ ուղեցույց ասող է յեղել պրոլետարիատի և դյուռացիության դաշինքի հիման վրա պրոլետարական դիկտատուրան ամրացնելու վերաբերյալ լենինյան դադավարը: Մենք միշտ հիշել ենք Լենինի 1921 թվի մեծ ավանդը.

«10—20 տարիների ճիշտ փոխհարաբերություններ դյուղացիության հետ, և ապահովված և հաղթությունը համաշխարհային մասշտաբով (նույնիսկ յեթե ձեռնարկեն պրոլետարական հեղափոխությունները, վորոնք աճում են), այլապես սպիտակ-գվարդիական տեուրի 20—40 տարիների չարհարանքներ»:

Այդ լենինյան ավանդները մենք այդպիսի հաջողությամբ ենք կենսագործել այն պատճառով, վոր մեր ամբողջ գործը, մեր ամբողջ աշխատանքը ղեկավարել և լենինի գործի արժանավոր շարունակողը, վորին պատկանում և սոցիալիստական հեղափոխության վերաբերյալ լենինյան դադափարները զարգացնելու յերախտիքը, այն է՝ մեր Ստալինը: (Փոքորիկից, յերկարացի ծափահարություներ, վորոնք ովացիայի յեմ փոխարկվում: Բայուրը վոսֆի յեմ կանգնում: Բացակայուցություններ՝ «կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ուռ»):

Մեր գործի հաջողությունները մենք նվաճում եյինք հեղափոխության թշնամիներին, լենինիզմի թշնամիներին դեմ մղած մարտերում:

Կուսակցության մեջ սողոսկած անհարազատ մարդիկ և ամեն տեսակ բուրժուական այլասերվածները, պրովոկատորները և լրտեսները, ինչպիսիք են՝ Տրոցկին, Ռիկովը, Բուխարինը, կատաղի գրոհներ եյին մղում, վորպեսզի մեզ ճիշտ գծից չեզեն, վորպեսզի կուսակցությունը հասցեն այն բանին, վոր նա առաջին պրոլետարական հեղափոխության դժվարություններին առաջ կապիտուլյացիա անի: Այդպես եյին վո՛չ միայն տրոցկիստները, այլև այդ բոլոր աջերը, ձախլիկները, զինովյեվականները, բուխարինականները և այլ հակալենինյան խմբիկները:

Նախքան բուլչեիկյան շարքերից դրանց ավելով արտաքինը, հարկ յեղալ, վոր մենք մի շարք տարիների ընթացքում հսկայական բացատրական աշխատանք կատարենք կուսակցության և բանվոր դասակարգի մեջ, բավականաչափ

միջոցառումներ կիրառենք՝ կուսակցական միասնությունը պահպանելու և մեր շարքերը բուրժուազիայի այդ բոլոր դործակալներից մաքրելու համար: Հեղափոխությունը ցույց տվեց, վոր կուսակցությունը մեջ բավականաչափ այդպիսի անհարազատ մարդիկ են խցկվել, իսկ դրանցից վոմանց ել դեռևս ցարական պահնորդական բաժինը, ինչպես նաև ոտարեկրյա հետախուզություններն եյին ուղղակի մեր կազմակերպություններն ուղարկել:

Մեր առաջ դրված եր մի այսպիսի գլխավոր խնդիր՝ պահպանել բանվոր դասակարգի դաշինքը դյուղացիության հետ, ընդամին ապահովելով ամբողջ սոցիալիստական չինարարության առաջատար ուժ հանդիսացող սոցիալիստական ինդուստրիայի վերելքի այնպիսի տեմպեր, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում յերկիրը դուրս բերենք խոր հետամնացությունից, տնտեսական հետամնացությունից, տեխնիկական հետամնացությունից, կուլտուրական և ուսումական հետամնացությունից: Այդ մեզ ուղղակի թելադրում եր ներքին և մասնավոր միջադեպին իրադրությունը: Այսօր, Հոկտեմբերյան հեղափոխության քսաներորդ տարեդարձին, մենք կարող ենք հաստատուն կերպով, առանց պարծենկոտության, ասել՝ այդ խնդիրը մենք հիմնականում հաջող ենք լուծել: (Ծափահարություներ): Հակառակ դեպքում մենք այժմ հնարավորություն չեյինք ունենա ասելու, վոր մենք արդեն գլուխ ենք բերել ժողովրդական տնտեսության վճռողական ճյուղերի տեխնիկական վերակառուցման իր ժամանակին սահմանած պլանը: Մեզ մոտ չեր լինի և՛ կոլտնտեսային կարգերի հաղթությունը, վորը մեր հեղափոխության յերկրորդ տասնամյակի ամենախոշոր նվաճումն է:

Սակայն, այդ չի նշանակում, թե կապիտալիզմի դեմ մրցելու հարցը մեզ համար արդեն լուծված է: Այդ հարցը վո՛չ միայն լուծված չէ, — այն ամբողջովին չի՛ ել կարելի լուծել առանց սոցիալիզմի հաղթության՝ մյուս յերկրներում:

Մարքսիզմը մեզ սովորեցնում է այն, վոր չահագործողներին տապալելուց հետո դասակարգային կռիվը միայն չի թուլանում, այլ, ընդհակառակը, շատ ավելի սուր ձևեր է ստանում: Այդ առաջիկ էս վերաբերում է թշնամական կապիտալիստական շրջապատման մեջ սոցիալիզմ՝ կառուցող առաջին պետությունը: Կարծեմ դժվար չէ հասկանալ, վոր սոցիալիզմին թշնամի ուժերին այս դեպքում սնում է այդ ամբողջ արտաքին շրջապատումը և յուրաքանչյուր կապիտալիստական յերկիր՝ առանձին վերցրած:

Մեր դարդացումը համեմատում ենք կապիտալիզմի յերկրներում տիրող դրություն հետ մի՛չ միայն մենք: Այդ անում են նաև մեր թշնամիներն իմպերիալիզմի բանակից: Այդ համեմատությունից մենք անում ենք մեր պրակտիկ յեղբրակացությունները, իսկ նրանք անում են ուրիշ, հակառակ յեղբրակացություններ: Մի բան պարզ է՝ կապիտալիզմն ինքը զենքերը վար չի՝ զնի մեր յերկրում սոցիալիզմի ունեցած հաջողությունների առաջ: Այդ հաջողությունները բուրժուազիայի բանակում առաջ են բերում կատաղի քինախնդրություն, վորը փոխարկվում է հուսահատություն քինախնդրության: Դրա հետ մենք պետք է հաշվի նստենք, վորպես փաստի հետ:

Հաղթական սոցիալիզմի հետ ունեցած բացահայտ, այսպես ասած, խաղաղ մրցության մեջ անընդհատ նորանոր դիրքեր կորցնելով, բուրժուազիան և մանավանդ նրա Փաշիստական ջարդարարները դիմում են բոլոր և ամեն տեսակ խլուրդային աշխատանքների, անկյունից կատարվող բոլոր և ամեն տեսակ ստորությունների: Այդ ակնառու կերպով յերևում է տրոցկիզմի որինակից, վորը վաղուց արդեն դարձել է լրտեսա-տրոցկիզմ, լրտեսների, վնասարարների, պրոֆուկատորների և տետրիստների ամբոխ: Ընկեր Ստալինը փայլուն կերպով բացահայտել է այժմյան տրոցկիզմի եյությունը: Այդ քաղաքական հոսանք չէ, վորը պետք է իր ծրագիրն ունենա և իր դեմքը մասնաններից չթաղցնի: Լրտեսա-տրոցկիզմը՝ այդ — հետախույզների,

մարդասպանների և վնասարարների բանդա չէ, վորի հետ պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են ժողովրդի նենդագույն թշնամիների հետ: (Մ ա փ ա հ ա ր ու ք յ ու ն է ն ե ր): Այդ բոլոր թափթփուկների պոչը մենք, իհարկե, կսեղմենք, վորքան ել ոտարերկրյա հետախույզությունները նրանց ծառայության վարձեն...

Դրա մեջ մենք տեսնում ենք մեկն այն պայմաններից, վորոնցից կախված է հանդիստ աշխատանքը և հաջողությունը կապիտալիզմի դեմ ունեցած մեր մրցությունը դիսավոր ճակատներում:

Այսօր գլխավոր մրցությունը կապիտալիզմի հետ ընթացում է տնտեսական բնագավառում, ուստի և այդ մրցության մեջ գլխավոր կրիտերիան (չափանիշ) հանդիսանում է աշխատանքի արտադրողականությունը: Այստեղ ևս մենք հիշում ենք լենինյան ցուցումը, վոր «աշխատանքի արտադրողականությունը, այդ, վերջին հաշվով, ամենակարևորը, ամենաաղյուսավորն է նոր հասարակակարգի հաղթության համար»:

Մենք դեռևս չենք կարող ասել, թե այս գործում մենք բավականաչափ հաջողություններ ունենք, թեև մեզ մոտ կան իրենց գործն որինակելի կերպով գլուխ բերող գործարաններ ու Փարբիկաներ: Արդյունաբերության մի ամբողջ շարք կարևոր ճյուղերում մենք դեռևս հետ ենք մնում տեխնիկայով առաջավոր հանդիսացող կապիտալիստական յերկրներից, մանավանդ Ամերիկայից: Մենք դեռևս շատ բանում չենք կարողացել ոգտագործել ստալանովականների փորձն այն բանի համար, վորպեսզի բոլշևիկորեն վտարի հանենք գործարաններն ու Փարբիկաները, արդյունաբերության ամբողջ ճյուղեր:

Բայց այս բնագավառում ունեցած առաջին եյական հաջողությունների կողքով չի կարելի անցնել, մանավանդ յերբ մենք Խորհրդային Միությունը համեմատում ենք մյուս յերկրների հետ: Ահա արդեն 7—8 տարի յե, ինչ մեկ բանավորի տարեկան արտադրանքի չափերի գործում համա-

բյա միեւնույն տեղում են դոփոխում խոշորագույն կապի-
տալիստական յերկրները, այնպիսիներն, ինչպես են՝ Ամերի-
կան, Գերմանիան, Անգլիան։ Մինչդեռ այդ նույն ժամա-
նակաշրջանում, այսինքն 1929 թվից սկսած, բանվորի աշ-
խատանքի արտադրողականութունը մեր արդյունաբերու-
թյան մեջ ավելացել է ավելի, քան յերկու անգամ։

Միմիայն 1936 թվի—ստախանովյան շարժումն սկսե-
լուց հետո առաջին տարվա—ընթացքում աշխատանքի արտա-
դրողականութունը մեր խոշոր արդյունաբերության մեջ
ավելացավ 21 տոկոսով։ Մեր յերկրում, վորտեղ ճգնաժա-
մերը բացակայում են, աշխատանքի արտադրողականության
մշտական աճման համար արգելքներ չկան։ Ընդհակառակը,
միայն այժմ մենք կարող ենք ասել, վոր վերջին տարիներ-
ում կառուցված գործարաններում բանվորների կադրերն
արդեն անցել են տեխնիկական ուսումնառության մի վո-
րոշ ժամանակամիջոց և այժմ կարող են տալ աշխատանքի
արտադրողականության իսկական վերելք։ Այդ ակնկալու-
թյունները լիովին կարդարանան, յեթե մեր տնտեսական,
ինժեներ—տեխնիկական և արհիտեկտոնական կադրերն իսկա-
պես հասկանան իրենց խնդիրները, ջարդեն գործն արգելա-
կող բյուրոկրատական խոչընդոտները և լրջորեն ձեռնա-
մուխ լինեն ստախանովականների աշխատանքի կազմակերպ-
ման։

Մեր գյուղատնտեսության հնարավորություններն ևս
մեծ են։ Այժմ կոլտնտեսություններում քիչ չեն վո՛չ միայն
տրակտորին, այլև կոմբայնին լրիվ տիրապետող մարդիկ։
Բովական է ասել, վոր սրանից դեռևս չորս տարի առաջ
ՄՏ կայաններում կոմբայնի միջին տարեկան արտադրանքը
կազմում էր ընդամենը 70 հեկտար, այնինչ արդեն անցյալ
տարի այդ արտադրանքը հասավ 350 հեկտարի, այսինքն
3 տարվա ընթացքում ավելացավ հինգ անգամ։

Այս բոլորից պրակտիկ յեզրակացություններ անենք ու,
նախ և առաջ, ընդունենք, վոր մեզ մոտ սոցիալիստոսեն
աշխատում է միայն մի գործարտնր, վորը լավ արտա-

դրանք տալիս է վո՛չ թե պակաս, այլ ավելի, քան ԽՍՀՄ
սահմաններից դուրս գտնվող նույնպիսի գործարանը։ Տեխ-
նիկային տիրապետելու գործում մեր կադրերն արդեն մեծ
հաջողություններ են ձեռք բերել։ Այդ հաջողությունները
մեր Փարբիկաներում և գործարաններում պետք է մարմնա-
վորել աշխատանքի բարձր արտադրողականության մեջ,
սոցիալիստական հասարակությանն արժանի բարձր արտա-
դրողականության մեջ։ Այն ժամանակ կապիտալիզմի դեմ
ունեցած մրցության գլխավոր ճակատում պայքարի յեւթը
վճռված կլինի։

Բոլշևիկորեն ծավալել պայքարն արդյունաբերության
մեջ, տրանսպորտում և գյուղատնտեսության մեջ հանում
աշխատանքի բարձր արտադրողականության—այս է վճռա-
կան խնդիրը։

III

ՀՆՈՍՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հենց սկզբից վո՛չ մի-
այն թշնամիները, այլև բազմաթիվ կեղծ «բարեկամներ»
մոտալուտ կործանում եյին գուշակում նրան։ Առանձնապես
հաճախ եր գործի դրվում այնպիսի փաստարկը, թե պրո-
լետարական հեղափոխությունը Ռուսաստանում անժամա-
նակ է, թե սոցիալիզմը չի կարող հաղթել մեկ յերկրում։
Լենինն այս վողորմելի բուրժուական նախապաշարմունքին
հակադրեց սոցիալիստական հեղափոխության վերաբերյալ
գիտական, մարքսիստական հայացք, իմպերիալիզմի առանձ-
նահատկությունները հաշվի առնելով։ Լենինը դեռևս 1916
թվին «Военная программа пролетарской революции»
հոդվածում գրում էր․

«Կապիտալիզմի զարգացումը զանազան յերկրնե-
րում վերին աստիճանի անհասարաքաչափ է կա-

տարվում: Ապրանքային արտադրութեան պայմաններում այլ կերպ չեր ել կարող լինել: Այստեղից անխախտ յեղրակացություն՝ սոցիալիզմը չի կարող բոլոր յերկրներում միաժամանակ հաղթել: Նա սկիզբնապես կհաղթի մեկ կամ մի քանի յերկրներում, իսկ մնացածները մի վերջ ժամանակի ընթացքում բուրժուական կամ միջ-բուրժուական կմնան»:

Լենինի կողմից գիտականորեն ապացուցված այս թեորեմի վերաբերյալ լիովին հաստատված է և՛ պրակտիկորեն, հաստատված է մեր յերկրում սոցիալիզմի միլիոնավոր պանծալի կառուցողների կողմից:

Մենք ապրում ենք կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի եպոխտում, յերբ կապիտալիստական բանակում հակասութուններն արդեն հասել են ծայրահեղ սրության: Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմ առաջ բերողն այդ հակասութունների սրումն էր: Հոկտեմբերյան հեղափոխությունը նշանակում էր համաշխարհային կապիտալիզմի կործանման սկիզբը, այլ կերպ ասած՝ միջազգային պրոլետարական հեղափոխության սկիզբը:

Այսպես ուրեմն, համաշխարհային հեղափոխությունն արդեն սկսվել է: Բայց այն սկսվել է վո՛չ թե ամբողջ շրջան մեկն խորտակելու միջոցով, այլ կապիտալիզմի առանձին ողակների անկման միջոցով: Առաջին այդպիսի ողակ դուրս յեկավ բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանը, վորին փոխարինելու յեկավ սոցիալիստական պետությունը:

Այդ ժամանակից սկսած պրոլետարական հեղափոխությունը, վորպես մեր ժամանակի ամենաառաջավոր յերևույթ, դարձավ ժողովրդական մասսաների բոլոր իսկապես պրոգրեսիվ, թեկուզ և վո՛չ զուտ կոմունիստական, շարժումների հենարանը: Աշխատավորների դեմոկրատական իրավունքների համար Փաշխտների դեմ մղվող պայքարն էլ, թույլ յերկրների ազգային անկախության համար իմպերիալիստական ագրեսորների դեմ մղվող պայքարն էլ

այժմ նրա մեջ է դրնում իր հենարանը: Կապիտալիստական յերկրների մեջ արդեն չկան այնպիսիները, վորոնք առաջադիմության հուսալի հենարան հանդիսանային: Զառամած կապիտալիզմի համար առաջադիմականը գնալով ավելի ու ավելի խորթ է դառնում: Այն ամենի շահերի պաշտպանության գործում, ինչ առաջադիմական է, կուլտուրայի և ագրգային ազատության շահերի պաշտպանության գործում այժմ ակնաբանորապես տեղը պատկանում է առաջին սոցիալիստական հեղափոխությանը: (Փոքոքիպից ծափաբարձք յուլին) : Այն ամենը, ինչ առաջադիմական է, այն կողմն է ձգտում՝ վերջնականապես կորցնելով կապիտալիզմի վրա դրած հույսերը: Այսպես, պատմական դարգացման ընթացքով կապիտալիզմը դնում է դեպի իր վախճանը, տեղը զիջելով աճող սոցիալիստական հեղափոխությանը: (Փոքոքիպից ծափաբարձք յուլին) :

Քաղաքական բնագավառում սոցիալիզմը մեր յերկրում ամբողջովին հաղթել է դեռևս 1917 թվի հոկտեմբերյան սերերին: Յերկրի եկոնոմիկայում սոցիալիզմի վերջնական հաղթության մասին մենք կարող ենք խոսել սկսած այն ժամանակից, յերբ դյուդացիական մասսաները շրջադարձ կատարեցին դեպի կոլտնտեսությունների ուղին, այսինքն դեռ 7—8 տարի առաջ: Կուլտուրայի բնագավառում սոցիալիզմի վերջնական հաղթության մասին խոսելը դեռ վաղ է: Սրա հետ կապված է այն փաստը, վոր մենք դեռ մարդկանց դիտակցությունից կապիտալիզմի մնացորդները վերացնելու այնքան շատ աշխատանք ունենք: Դրանք հաջողությամբ կարելի յե վերացնել սոցիալիստական կուլտուրայի լայն բարձրացմամբ միայն: Բայց դրա փոխարեն իսկապես սոցիալիստական կուլտուրայի ուղիով կատարած յուրաքանչյուր քայլ վո՛չ միայն անհապաղ իր արդյունքներն է տալիս, այլև ստեղծում է նախադրյալներ, վորպեսզի սոցիալիզմը կոմունիզմի վերածի:

Մտախնայյան շարժման նշանակութունը քննության

առնելով, ընկեր Ստալինը խոսում է այն մասին, *վոք «դա»* (այդ շարժումը: Հայ. հրատ. խմբ.) պայմաններ և նախապատրաստում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար»: Այդ նույն ճառում ընկեր Ստալինն այդ միտքն այսպես էր զարգացնում.

«Մի՞թե պարզ չէ, վոր ստալանովականները մեր արդյունաբերության մեջ նովաստորներ են հանդիսանում, վոր ստալանովյան շարժումը մեր ինդուստրիայի ապագան է, վոր նա իր մեջ պարունակում է բան-վոր դասակարգի ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի հատիկը, վոր նա մեզ համար բաց է անում այն ուղին, վորի վրա յե միայն, վոր կարելի յե ձեռք բերել աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշները, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու ֆիզիկական աշխատանքի միջև հակաթուրքունը վոչնչացնելու համար»:

Ուստի «բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը մինչև ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակը բարձրացնելու» խնդիրը, աշխատավորների ամբողջ մասսայի կուլտուրականության բարձրացման հետ մեկտեղ,—այն հիմնական խնդիրն է, վորի լուծումից կախված են մեր գլխավոր հաջողությունները:

Սորհրդային իշխանության հաղթության ժամանակից ի վեր կոմունիզմն սկսել է մեր կյանքի մեջ թափանցել: Այդ ժամանակից անցել են յերկրի սոցիալիստական վերակերտման 20 տարիներ: Յեւ ինչի՞ յենք մենք հանդել: Վո՞րն է ընդհանուր հանրագումարը:

Մենք ստեղծել ենք սոցիալիստական հասարակություն, վորի մեջ չահագործողները տեղ չունեն, չահագործումը տեղ չունի: Ստեղծված է նոր, բարձրագույն տիպի հասարակություն: Մեր հասարակության յերկու դասակարգերի, բանվորների և գյուղացի-կոլտնտեսականների հարաբե-

րությունների մեջ վո՛չ միայն չկան թշնամանք ու անհաշտելի հակասություններ, այլև, ընդհակառակը, տեղի յե ունենում կյանքի պայմաններով, կուլտուրական զարգացմամբ, դեպի կոմունիզմը նրանց ունեցած ձգտումով մերձենալու պրոցես:

Մեր ժողովուրդն ապրում է նոր ձևով, վորովհետև սոցիալիզմը թափանցել է մեր կարգերի բոլոր ծակոտիները: Այս նոր կյանքն աշխատավորներին թեւավորում է, նրանց մեջ նորանոր ուժեր է ծնեցնում: Յերիսասարդությունից, մեր յերեխաներից աճում է այն սերունդը, վորը հաջողությամբ գլուխ է բերելու սոցիալիստական հասարակության վիթխարի և զնալով ավելի աճող խնդիրները:

Մենք չենք կարող ասել, թե այն ամենը, ինչ ժողովրդդական է, արդեն դարձել է սոցիալիստական: Բայց իսկապես սոցիալիստականը մեր աչքի առաջ ժողովրդական է դառնում, ժողովրդական մասսաներին մոտիկ: Մյուս կողմից, ամեն վոք կարող է տեսնել, վոր մեր յերկրի աշխատավոր մասսաներն ընդունում են վորպես հակաժողովրդական բան, վորպես ժողովրդին անհարազատ բան այն ամենը, ինչ հակակոմունիստական է՝ լինի այդ պրակտիկ դործերում, թե գիտական-ստեղծագործական բնագավառում: Մեզ մոտ սովորական է դարձել, վոր կոմունիստական կուհեցույթյան և խորհրդային իշխանության թշնամիներին սակցության և խորհրդային իշխանության թշնամիներն են համարում: Իսկ Գերագույն Սոր-ճըրդի ընտրությունների որերս սկսված կամպանիան աշխատավորությունը կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության շուրջը հզորապես համախմբելու դործի յե վերածվել: (Մ ա փ ա հ ա բ ու ք յ ու ն ն ե ր):

Այս ամենն ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր մեր յերկրում ստեղծվել է ժողովրդի ներքին բարոյական և քաղաքական միասնություն, սոցիալիստական հասարակության բարոյական և քաղաքական միասնություն, վորպիսին առաջներում տեսնված չեր: (Մ ա փ ա հ ա բ ու ք յ ու ն ն ե ր):

Ժողովրդի աշխարհի միասնությունն չի՛ իմացել և չգիտես վո՛չ մի կապիտալիստական յերկիր։ Ներքին հակասությունները հոգոտում են կապիտալիստական հասարակությունը։ Տիրապետող փոքրամասնությունը, չահագործողական վերնախավն այնտեղ միշտ բաժանված է և դեմ է կանգնած ժողովրդին, դեմ է կանգնած չահագործվող մասսաներին։ Իր կարգերը խաթարապնդելու համար բուրժուազիան սովորաբար լայնորեն ոգտագործում է արտաքին վտանգը։ Բայց մեր ժամանակում նրա այդ բաճկոնը ևս պատվում է բոլոր կարերից։ Բոլորի աչքի առաջ կապիտալիզմն անդունդ է գլորվում։

Մեր յերկրի բախտավորությունն այն էր, վոր, դժվարություններից չվախենալով, նա դուրս պրծավ կապիտալիստական նեխող հասարակությունից։ Յեւ ահա քսան տարի յե, վոր մենք դնում ենք մեր նոր ճանապարհով, դնում ենք դեպի կոմունիզմ, գիտակցելով, վոր մեզ բախտ է վիճակվել վստահելի ուղի բաց անելու դեպի ամբողջ մարդկության պայծառ կյանքը։ Սա բարձրացնում է մեր յերկրի մասսաների գիտակցությունը և աշխատավորներին համախմբում է։

Խորհրդային Միության ժողովրդական մասսաների բարոյական և քաղաքական միասնությունը դարբնվել է բուրժուա-կալվածատիրական դասակարգերի և ոտարերկրյա ինտերվենտների դեմ մղված հերոսական պայքարի փորձությունների բովում։ Նա ամբացել է ժողովրդական անտեսության վերելքի դործում բանվորների ու գյուղացիների ունեցած դաշինքի հիման վրա։ Բայց սոցիալիստական հասարակությունն ստեղծելուց հետո միայն,—հասարակություն, վորի մեջ չահագործողների համար և մարդու կողմից մարդուն վորեւ չահագործման յենթարկելու համար փակված են բոլոր դռները,—սկսեց արտահայտվել ժողովրդի ա՛յն նոր բարոյական-քաղաքական միասնությունը, վորը մեծագույն ուժ է հանդիսանում։ Այդպիսի բարոյական և քաղաքական միասնությունը, վորը սողորված է խոր ինտերնա-

ցիոնալիզմով, Խորհրդային Միության ժողովուրդներին և ազգություններին կհամախմբի վորպես մի ամբողջություն։ Նրա մեջ իրենց ապագայի նախատիպն են տեսնելու նաև մյուս յերկրների ժողովուրդները։

Ժողովրդի բարոյական-քաղաքական միասնությունը մեր յերկրում ունի և իր կենդանի մարմնացումը։ Մենք ունենք մի անուն, վորը սոցիալիզմի հաղթությունների խորհրդանշանն է դարձել։ Այդ անունը դրա հետ մեկտեղ խորհրդային ժողովրդի բարոյական և քաղաքական միասնության խորհրդանշանն է։ Դուք գիտե՞ք, վոր այդ անունն է—Սոա՛լին։ (Մափաճարություններ։ Բոլորը վոսֆի յեմ կանգնում։ Բացակացություններ՝ «Ուսում ընկեր Սոալինին»)։

Մեր հեռանկարների մասին խոսելով, մենք նկատի ունենք, ամենից առաջ, մեր յերկրի խաղաղ զարգացումը։ Դե՛հ, իսկ յեթե խաղաղությունը խախտվի, յեթե չունը չղթան կտրի և մեզ վրա, մեր տան վրա հարձակվի, մենք դրան ի՞նչ կասենք։ Մենք կպատասխանենք՝ թո՛ղ թշնամին փորձի՛ սոցիալիստական հասարակության բարոյական և քաղաքական միասնության ուժը։ (Մափաճարություններ յի վորոս։)

Ամենից լավ է այս օրերին մեր զգացմունքներն ու մտքերն արտահայտել պարզ, բոլոր յերկրների աշխատավորների հասկանալի խոսքերով՝

Կեցցե՛ Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ավելի՛ բարձր Մարքսի—Ենգելսի—Լենինի—Սոալինի դրոշմը։

(Բոլորը վոսֆի յեմ կանգնում։ Փոքոքիպի ծափաճարություններ։ Բացակացություններ՝ «Ուսում ընկեր Սոալինին»)։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Մեր հաղթութեան նշանակութիւնը	5
II. Մրցում կապիտալիզմի դեմ	19
III. Հեռանկարների մասին	33

Թարգմանիչ Ա. Խոնդկարյան
 Թարգմանութիւնը խմբագրեց Պ. Ս. Պետրոսյան
 Տեխնիկական խմբագիր Ս. Խաչատրյան
 Մրբագրիչ Վ. Ջիդեշյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № 4—3280, հրատ. № 560
 պատվեր № 65, տիրաժ 15000
 Հանձնված է արտադրութեան 10/IV 1938 թ.
 Ստորագրված է տպագրելու 11/V 1938 թ.
 Դիւնը 30կ.

Պետհրատ—քաղաքական գրականութեան հրատարակչութեան
 տպարան, Յերեւան, Ալավերդեյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0403877

ԳԻՆԸ 30 Կ.

В. М. МОЛОТОВ

К ДВАДЦАТИЛЕТИЮ
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Госиздат—Издательство полит. литературы
Ереван, 1938